# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2024թ. թիվ 953-Ա

ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» թիվ 1806-Ն որոշման հավելված 19-ով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ և 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթներով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Քարկոփի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների և դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-11-19 15:49:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր